

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ Կատարի Պետության կառավարությունը (այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր), առաջնորդվելով իրավահավասարության եւ երկու երկրների փոխադարձ ազգային շահերի սկզբունքներով, ցանկանալով ամրապնդել եւ զարգացնել երկկողմ համագործակցություն գյուղատնտեսության բնագավառում, համաձայնեցին հետեւյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1

Պայմանավորվող կողմերը, սույն Համաձայնագրին եւ իրենց երկրների օրենսդրությանը համապատասխան, պայմանավորվում են գյուղատնտեսության բնագավառում իրականացնել համագործակցություն:

ՀՈՂՎԱԾ 2

Պայմանավորվող կողմերը կաջակցեն երկու երկրների պետական եւ ոչ պետական կազմակերպությունների միջեւ կապերի հաստատմանը եւ կցուցաբերեն անհրաժեշտ եւ հնարավոր աջակցություն գործընկերներին՝ իրենց համագործակցության բոլոր մակարդակներում:

Պայմանավորվող կողմերը համագործակցությունը կիրականացնեն հետեւյալ ուղղություններով՝

1. երկկողմ գյուղատնտեսական առևտրի զարգացում,
2. գյուղատնտեսական բնագավառի տեղեկության փոխանակում,
3. գիտնականների, աշխատողների եւ փորձագետների փոխանակում,
4. սեմինարների եւ դասընթացների համատեղ կազմակերպում,
5. համատեղ ձեռնարկությունների ստեղծման խրախուսում:

ՀՈՂՎԱԾ 3

Սույն Համաձայնագրի 1-ին հոդվածի իրագործման նպատակով Պայմանավորվող կողմերը նախապատվություն կտան համագործակցությանը հետեւյալ բնագավառներում՝

1. բույսերի հիվանդությունների դեմ պայքարի, ինչպես նաեւ երկու երկրներ ներմուծվող գյուղատնտեսական մթերքների նկատմամբ կիրառվող օրենսդրության եւ ստուգման կանոնների վերաբերյալ տեղեկության փոխանակում,
2. գյուղատնտեսական մեխանիզացիայի տեխնոլոգիաների բնագավառում փորձի փոխանակում,
3. ոռոգման բնագավառում ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման փորձի եւ ջրերի ու ջրերի օգտագործման վերաբերյալ տեղեկության փոխանակում,
4. անասնապահության, անասնապահական արտադրանքի եւ կերարտադրության բնագավառներում ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկության եւ փորձի փոխանակում,
5. երկու երկրներում կենդանիների տարածված հիվանդությունների վերաբերյալ տեղեկագրերի եւ տեղեկության փոխանակում,
6. անասնապահական ստուգումների հետ կապված միջոցառումների, համաճարակային ստուգման, ինչպես նաեւ պատվաստուկների, անասնապահական դեղերի արտադրության եւ լաբորատոր ախտորոշումների բնագավառում փորձի փոխանակում եւ համագործակցություն,
7. գյուղատնտեսական նյութերի, բուսական եւ կենդանական ծագման արտադրանքի

վաճառքի, ինչպես նաև արտադրական տեխնոլոգիաների բնագավառներում փորձի փոխանակում:

ՅՈՒՐԱԿՐԻ 4

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի այն օրվանից, երբ Պայմանավորվող կողմերը կծանուցեն միմյանց սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

Սույն Համաձայնագիրը կգործի հինգ տարի ժամկետով: Նրա գործողությունը ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հինգ տարիների համար, եթե Պայմանավորվող կողմերից որեւէ մեկը սույն Համաձայնագրի ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ մյուս Պայմանավորվող կողմին գրավոր չհայտնի այն դադարեցնելու իր մտադրության մասին:

ՅՈՒՐԱԿՐԻ 5

Սույն Համաձայնագրում կարող են կատարվել լրացումներ եւ փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով եւ հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

ՅՈՒՐԱԿՐԻ 6

Համաձայնագրի գործողության դադարեցումը չի խոչընդոտում Համաձայնագրով նախատեսված այն աշխատանքների կամ ծառայությունների իրականացմանը, որոնք սկսվել, բայց չեն ավարտվել Համաձայնագրի գործողության դադարեցման պահին:

Կատարված է Դոհա քաղաքում, 2007 թվականի ապրիլի 22-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն եւ անգլերեն, ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են:

Տեքստի մեկնաբանման հետ կապված տարաձայնություններ առաջանալու դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2007թ. հոկտեմբերի 8-ից:

AGREEMENT

ON AGRICULTURAL COOPERATION BETWEEN THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE GOVERNMENT OF THE STATE OF QATAR

The Government of the Republic of Armenia and the Government of the State of Qatar (hereinafter referred to as the Contracting Parties),

following the principles of legal equality and national mutual benefits of both countries, expressing desire to strengthen and develop bilateral agricultural cooperation,

have agreed as follows:

Article 1

The Contracting Parties will cooperate in the field of agriculture, according to this Agreement and the legislation of their countries.

Article 2

The Contracting Parties will support establishment of the links between

both state and non-state organisations and provide necessary and possible assistance to the cooperation partners at all levels in their cooperation.

The Contracting Parties will cooperate in the following ways:

1. Development of bilateral agricultural trade;
2. Exchange of agricultural information;
3. Exchange of visits by scientists, collaborators and experts;
4. Arrange joint seminars and training courses;
5. Encourage of joint ventures.

Article 3

For the implementation of Article 1, the Contracting Parties will give priority to the cooperation in the following areas:

1. Exchange information in combating plant diseases as well as in legislation and control rules applying to agricultural products which are importing into both countries;
2. Exchange experience in agricultural mechanisation technologies;
3. Exchange experience in use of modern irrigation technologies and latest information about water and water use;
4. Exchange experience and information in research of livestock, livestock production and feed production;
5. Exchange manuals and information in animal diseases prevalent in both countries;
6. Exchange experience and cooperate in animal control measures, epidemic control as well as in vaccines, animal medicines production and laboratory diagnoses;
7. Exchange experience in sale of agricultural materials, plant and animal production, as well as in production technologies.

Article 4

This Agreement shall come into force on the date when the Contracting Parties have notified each other about completion of the internal procedures which are necessary for entering into force of this Agreement.

This Agreement shall be valid for five years. Its validity will be automatically extended for an additional period of five years, unless either of Contracting Parties notifies the other in writing six months before the expiration date of this Agreement of its intention to terminate or to add this Agreement.

Article 5

Any amendment, addition or deletion to this Agreement by mutual consent in the form of Minutes, which will be considered, as an inseparable part of this Agreement.

Article 6

The termination of the Agreement will not prevent the implementation of the work and services, which have begun but not yet finished at the moment of termination of this Agreement.

Done in Doha on April 22, 2002 in the Armenian, Arabic and English languages, all three texts being equally authentic.

In case of divergence in interpretation the English text shall prevail.

The Agreement has entered into force on 08.10.2007.